


շաբաթ առաջ ուղարկվելու Ա առևտն առաջ սկզբ նորմ ա առաջ  
մունքակ ու առարձնակ բարեկ առ Ա առևտն պահանձ ա  
հայ սկզ ու դաշտակ Ա առ առաջ սկզբ քոյ առաջ առաջ  
առ իր առ Ա առ  
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ  
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ  
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ



## Կ Ր Օ Ն Ա Կ Ա Ն

ԸՆԹԵՐՑՈՒՄԾ ՄՐՅՈՅ ԱՒՏԵՍ. ԱԲ ԸՆՏ ԴՈՒԿ.

(Ե. 36 - Ը. 25):

Է. Գ. 36. Ակադեմ ուն զնա ի փարիսեցւոյն, զի կերիցէ ճաշ  
ընդ նմա: Եւ մտեալ ի տուն փարիսեցւոյն, բազմեցաւ: 37. Եւ  
կին մի էր ի քաղաքին մեղաւոր. իբրեւ գիտաց, թէ քազմեալ է  
ի տան փարիսեցւոյն, քերեալ շիշ մի իւղոյ ազնուի. 38. Կայր  
յետոյ առ ուսս նորա, լայր. և արտասուօքն սկսաւ թանալ զոտս

նորա, և հերով գլխոյ իւրոյ ջնջէր. և համբուրէր զոտս նորա, և օծանէր իւղովն: 39. Եւ տեսեալ փարիսեցւոյն՝ որ կոչեացն դնա, ասէր ընդ միտս իւր. Առ թէ մարդարէ ոք էր, առա գիւ դնա, ասէր ընդ միտս իւր. Առ թէ մարդարէ ոք էր, առա գիւ դնա, ասէր ընդ կամ ո՞րպիսի ոք կին մերձենայ ի ռա. զի մետէր, թէ ո՞լ կամ ո՞րպիսի ոք կին մերձենայ ի ռա. Այս դաւոր է: 40. Պատասխանի ետ Յիսուս, և ասէ ցնա. Սիմոնին դաւոր է: 41. Երկու պարտապանք էին ուրումն փոխատուի, մին պարտ էր հինգ հարիւր դաշեկան, և միւսն՝ յիսուն: 42. Եւ իրրե ոչ գոյր նոցա հատուցանել, երկոցունց շնորհեաց. արդ՝ ասա, ո՞լ առաւել սիրեացէ զնա: 43. Ասէ Սիմոնին. Ինձ այսպէս թուի, եթէ որում զբազումն չնորհեաց: Եւ նա ասէ ցնա. ուղիղ դատեցար: 44. Եւ դարձեալ ի կինն կողմն, ասէ ցՍիմոնին. Տեսանես զայս կին. մոի ի տուն քո, ջուր ոտից իմոց ոչ ետուր, իսկ սա՝ արտասուօք իւրովք եթաց զոտս իմ: և հերով իւրով ջնջեաց: 45. Համբոյր մի դու ոչ ետուր ինձ, սա՝ աւասիկ յորմէ հետէ մուեալ եմ, ոչ դադարեաց ի համբուրելոյ զոտս իմ: 46. Իւղով զգութիւ ոչ օծեր, սա՝ իւղով անուշիւ օծ: 47. Վասն որոյ ասեմ քեզ: Թողեալ լիցին սմա մեղք իւր բազում: զի յոյժ սիրեաց: զի որում շատ թողուցու, շատ սիրէ, և որում սակաւ՝ սակաւ: 48. Եւ ասէ ցնա. թողեալ լիցին քեզ մեղք քո: 49. Եւ սկսան որ բազմեալն էին ընդ նմա՝ ասել ընդ միտս իւրեանց. ո՞լ է սա, որ զմեզս թողու: 50. Եւ նա ասէ ցկինն. Հաւարոք քո կեցուցին զքեզ, երթ ի խաղաղութիւն:

Ը. 1. «Եւ եղեւ յետ այնորիկ՝ և ինքն ըրջէր ընդ քաղաքու և ընդ գիւղս, քարոզէր և աւետարանէր զարքայութիւն Աստուծոյ, և երկոտասանքն ընդ նմա: 2. Կանայք ոմանք՝ որ բժշկեալ էին յայսոց չարաց և ի հիւանդութենէ, Մարիամ՝ որ կոտէր մագթաղենացի, յորմէ եւթն գեն ելեալ էր. 3. և Յովհաննայ կին քուղայ հաղարապետին չերովդի, և Շուշան, և այլք բազումք որք պաշտէին զնա յլնջիդ իւրեանց:

4. «Եւ ի ժողովել բազում ժողովրդոց և ըստ քաղաքաց քաղաքաց եկելոցն առ նա, ասէ առակաւ: 5. Ել սերմանացան սերմանել զսերմանիս իւր, և ի սերմանելն իւրում՝ էր որ անկաւ

առ ճանապարհաւ, և եղեւ կոխան, և թռչունք երկնից կերան զնա: 6. Եւ այլն անկաւ յապառաժի, և ընդ բուսանելն չորացաւ՝ առ ի չգոյէ հիւթոյ: 7. Եւ այլն անկաւ ի մէջ փշոց, և ընդ նմին բուսեալ փշոցն՝ հեղձուցին զնա: 8. Եւ այլն անկաւ յերկիր բարի և պարարտ, և բուսեալ, արար պտուղ հարիւրապատիկ: Զայս իբրև խօսեցաւ, ասէ: որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ: 9. Հարցանէին զնա աշակերտքն, թէ զի՞նչ իցէ առակն: 10. Եւ նա ասէ: ձեզ տուեալ է գիտել զխորհուրդս արքայութեան Աստուծոյ, բայց այլոցն՝ առակօք, զի տեսցեն, և մի տեսցին. և լուիցեն, և մի իմասցին: 11. Բայց՝ առակն՝ այս ինչ է: Ոերմըն՝ բանն Աստուծոյ է: 12. Եւ որք առ ճանապարհաւն՝ այնոքիկ են, որ լսենն, և ապա գայ սատանայ և հանէ զբանն ի սրտից նոցա, զի մի հաւատասցեն և ապրեսցին: 13. Եւ որք յապառաժին, որք յորժամ լսիցեն, ինդութեամբ ընդունին զբանն, և արմասս ոչ ունիցին, որք առժամանակ մի հաւատան, և ի ժամանակի փորձութեան հեռանան: 14. Իսկ որ ի մէջ փշոցն անկաւ՝ նոքա են, որ իբրև լսեն, և հոգս և ի մեծութիւն և ի ցանկութիւն աշխարհիս զբաղեալ, հեղձնուն և անպտուղ լինին: 15. Իսկ որ յերկիրն պարարտ՝ որոց բարւոք և զուարթագին սրտիւ լուեալ զբանն, ընդունին, և տան պտուղ համբերութեամբ: 16. Ոչ ոք լուցանէ ճրագ, և թաքուցանէ ընդ կարասեաւ, կամ գնէ ընդ մահճօք, այլ ի վերայ աշտանակի դնէ, զի որ մտանեն՝ զլոյս տեսցեն: 17. Զիք ինչ ծածուկ՝ որ ոչ յայտ լիցի. և ոչ գաղտնի՝ որ ոչ ծանիցի և եկեսցէ ի յայտ: 18. Տեսէք այսուհետեւ զիարդ լսէքդ, զի ոյր գուցէ՝ տացի նմա. և ոյր ոչն գուցէ՝ և զոր կարծեն թէ ունիցի՝ բարձցի ի նմանէ: 19. Եկին առ նա մայրն և եղբարք իւր, և ոչ կարէին հասանել ի նա վասն բազմութեանն: 20. Ազգ եղեւ նմա, և ասեն. Մայր քո և եղբարք քո կան արտաքոյ և կամին զքեզ տեսանել: 21. Եւ ասէցնոսա. Մայր իմ և եղբարք իմ՝ սոքա են, որ զբանն Աստուծոյ լսեն և առնեն:

22. «Եւ եղեւ ի միում՝ յաւուրց, ինքն ել ի նաւ, և աշակերտք նորա, և ասէ ցնոսա. Եկայք, անցցուք յայնկոյս ծովակիս: Եւ

գնացին: 23. Եւ մինչդեռ նաւէին, ի քուն եմուտ. և էջ մրբիկ հոգմոյ ի ծովակին, և ուսնոյր, և տագնապէին: 24. Մատուցեալ զարթուցին զնա, և ասեն. Վարդապետ, Վարդապետ, կորնչիմք, աւասիկ: Եւ նա յարուցեալ սաստեաց հոգմոցն և խոսկութեան ջրոցն, և հանդարտեցին, և եղեւ խաղաղութիւն: 25. Ասէ ցնու սա, ուր են հաւատք ձեր: Եւ զահի հարեալ, զարմացան. և ասէին ցմիմեանս. ով արգեօք իցէ սա, զի և հոգմոց և ջրոց հրաման տայ, և հնազանդին սմա:

Սուրբ Աւետարանի այս ընթերցուածն՝ շաբայարութիւն է նախընթաց ընթերցուածին, յորում Քրիստոս Փրկիչն յանդիմաննեաց փարիսեցւոց և օրինականաց անհաւանութիւնն, որ չէին հաւատացել Յովհաննու քարոզած ապաշխարութեան, և չէին հաւանել նորա վկայութեանն, զոր վկայել էր Քրիստոսի համար: Փրկիչը կյանդիմանէր նոցա այս անհաւանութիւնը նմանեցնելով հրապարակներում նստող և իրենց կամքին պնդող մանուկներուն, որոնք միայն առիթ կփնտուեն իրենց ընկերին չհաւանելու, և կհակասեն. նոյնպէս և փարիսեցիք և օրինականներն՝ Յովհաննէսին չհաւանեցան՝ որ չէր ուտեր, չէր խմեր, և ասացին զի կայ նորա մէջ. իսկ երբ Քրիստոս սկսեց քարոզել և ուսուցանել և տեսան, որ կուտէ և կըխմէ, ասացին, թէ մաքսաւորներու և մեղաւորներու բարեկամէ. և դարձեալ չհաւանեցան. վասն զի Աստուծոյ խորհուրդը չէին փնտուէր, այլ իրենց խորհուրդն հաստատելու կհետեւէին: Այս առակով վճռեց Տէրը. թէ իմաստութիւնն իւր որդիներէն արդարացաւ. այսինքն՝ Աստուծոյ իմաստութեանն հասու եղան այն մարդիկն միայն, որոնք որ Աստուծոյ խորհուրդն հասկանալու կհետեւէին, որոնք հաւանել էին Յովհաննու քարոզած ապաշխարութեանն, և մկրտուել էին նորա մկրտութեամբ. նոյնպէս և Փրկիչն վարդապետութեանն ունինդիր էին: Արդ տեսնենք այս նոր շաբայարութեան թարգմանութիւնն ու բովանդակած իմաստն:

Ե. ԳԼ 36. «Այն քաջութեցներէն մին իտուաչը հորած, որ նորու նէր հուշ, ուրիշ: Եւ քարինեցոյն ուսուց բայց, ուղար նորուած:»

Եյս փարիսեցին՝ այն յանդիմանուած փարիսեցիներէն մին է, որ թերևս աւելի ինչ հարցնել և ուսանել կիսորհէր. վասն որոյ Ճաշի հրաւիրեց զՓրկիչն՝ իւր տունը: Փրկիչն ընդունեց սորա հրաւէրն, և տունը մտաւ, սեղանի մօտ նստաւ: Թէ ինչ հարցուց փարիսեցին, և ինչպէս լսեց, այն մասին ոչինչ մէջ չբերէր Աւետարանիչը, բայց կներկայացնէ մի անցք, որոյ վերայ ուսոյց Փրկիչն՝ իւր վարդապետութիւնը, թէ Քրիստոս պիտի վերցնէ մարդկան մեղքերն, և փարիսեցին լսեց այս ուսումն: Եւ անցքն՝ այս է:

37. «Այս առաջարկությունը մի մեղքաբար ին և իւր երբ գիտաւու, ուն գարիսեցան առաջարկությունը հայտն է, մի չի ազնիւ իւղ բեւաւ. երեւէ իսպան նարա առաջերան հայտն էր, իսպան, և արդարաւություն՝ ուրեց նարա առաջեր Արվել (Արմանու), և եր քայլուն առաջը իսպանենէր, և նորա առաջեր ինտերէր, և այս իւշից իւժիր (Արմ Քլուիը).»

Այս մեղաւոր կինը՝ թերեւս ներկայ էր Փրկչին նախընթաց վարդապետութեան, և լսեց այն յանդիմանութիւնը՝ զոր յանդիմանեց Փրկիչը փարիսեցիներու և օրինականներու անհաւանութիւնն. և թէ Փրկիչն՝ իմաստութեան որդիք անուանեց այն ժողովուրդն և մաքսաւորներն՝ որոք Յովհաննու քարոզած ապաշխարութեան մկրտութիւնն ընդունել էին, և ճանաչեցին Աստուծոյ արդարութիւնը՝ Փրկչի խօսքերովը. Այս մեղաւոր կինն՝ այս տպաւորութեան տակ կդառնայ առ Աստուծած, և իւր ամենամանդ ստացուածքն՝ այն մի շիշ ազնիւ իւզը կրերէ կընծայէ Աստուծոյ որդւոյն Քրիստոսի, որ մեղքերը վերցնողն է. խօսելով հասկացնելու խընդրուածք չունէր մեղաւոր կինն, այլ միայն կարտասուէր Փրկչին երեսը նայելու անարժան կհամարէր զինքն, ու ետևի կողմը կեցել էր. Տեսաւ որ Փրկիչը չմերժէր զինքը, սիրտ առաւ այս ընդունելութենէն. և սկսեց սպասաւորել Փրկչին, նորա ուաքերը լոււանալ՝ ոչ ջրով, ըստ որում իւր տան մէջը չէր, որ կոնք հանէր և ջուր լեցնէր. այլ սեղանին տակ բարձի վերայ նստած տեղումն՝ արտասուքովը մաքրեց ոտքը, և զլիուն մազերովը ջնջեց, Քանի շնորհակալ եղաւ այս մեղաւոր կինն, որ Փրկիչը չմերժեց իւր մատուցած սպասաւորութիւնն, և սկսեց ուաքերն համրուրել մինչև համարձակեցաւ իւզն հանել. և Փրկչի դլխուն վերայ թափել ու օծել. Այս իւզոյն թանգութիւնն՝ որ տաք երկրներումն անգին համարելի է՝ մեղաւոր կնոջ հաւատոց և դարձին կշեռն է այս գէպքում. Կինն՝ ուրախ է և հանգիստ, վասնզի Փրկիչը չմերժեց նորա մեղաւոր ձեռքերու սպասաւորութիւնն և դարձած որտին նուէրն և համարձակ կերպով կօծէր.

39. «Զատ (ԱՅՈՒՍ) հրատիրող վարդապետն աւետաւ, և իսուէր լոյ Հայութ. Երես՝ մի մարդուրէ ինէր, ապա իբիսուր, ուն ազ իսոյ սրբակն մի ին իւրինայ, իրէն, չի պաշտու է:

Այս փարիսեցին ևս միւս փարիսեցւոց նման կիսորհի մեղաւորներու յարաբերութեան մասին. և կհամարի, եթէ սուրբ մարդը կամ Աստուծոյ մարդը՝ մեղաւորի հետ պիտի չկենակցի. և փոխանակ իւր այս կարծիքի մասին հարցնելու Փրկչին, կիսորհի. թէ մի գուցէ մարդարէ չէ Յիսուս, և չիմացաւ. թէ այս կինը մեղաւոր է. այսպէս կիսորհի փարիսեցին, բայց ոչ ինչպէս միւս անհաւան փարիսեցիներն էին՝ այսպէս իւր խորհուրդը պնդող էր, այլ կիսորհէր, Յիսուսի գործած գործերուն մասին՝ որ մարդա-

րէի և Աստուծոյ մարդու գործեր են, և այժմ այս մեղաւոր կինը չէ կարող ճանաչել: Եյս երկրայութեան մէջ չմողուր զնա Փրիիչը, և ինքնին կոկոսի լուծել նորա երկրայութիւնը, նորա մտացն հասկանալի առակի լուծմամբ:

40. «Պատուին սահման Յիշու, և սահման Յիշու, մէ բան սահման է և բան սահման: Ասո՞ւ պատուին եւ սահման: 41. Երիսու պատուանին ի այս մէջ և լ է դիտուածի: Աէկը հինգ հարբեր դահնեկան ուրուտիւն եր, մէն՝ յիսուն: 42. և երբ չունեն նուած՝ որ հաստացնեին, երիսուն և բաշխեց: այժմ սահման ու սեւէ ու իտի ուրե շու:

Եյս առակը կառակէ Յիսուս այն մեղաւոր կնոջ և արդար կամ՝ քիչ մեղաւոր փարիսեցի Սիմովնին վերայ, կինն՝ ըստ որում յայտնի մեղաւոր է, շատ պարտական կհամարի: իսկ փարիսեցին՝ ըստ որում յայտնի մեղաւոր չէ: և Աստուծոյ խօսքն սիրող լինելով՝ զՅիսուս ճաշի կհրաւիրէ, և զի ոչ մի մարդ արդար չէ Աստուծոյ առջև՝ եթէ ոչ՝ Աստուծոյ շնորհելովը՝ վասնորոյ և զփարիսեցին՝ քիչ պարտական կհամարի: այս հայելովը՝ փարիսեցոյն հայեացքին կյարմարցնէ Փրկիչն. եթէ ոչ՝ Աստուծոյ իրաւանց մէջ մեղաւորը մեղաւոր է: «որ ոք զամենայն օրէնսն պահիցէ, և միով իւիք ինչ գթիցէ, եղեւ ամենայն օրինացն պարտապան»: Փարիսեցոյն հայեացքին կյարմարցնէ առակն, որպէս զի կարողանայ փարիսեցին արդարապէս վՃռել: Կնոջ յայտնի մեղքը՝ փարիսեցոյն անյայտ մեղքին համեմատելով, տասն անդամ աւելի կդնէ: Յիսուն գահեկան պարտք ունեցողը՝ վՃարելու գոյք չունի: և նեղութեան մէջ է, մինչեւ որ վՃարէ: հինգ հարիւր գահեկան պարտք ունեցողն ևս վՃարելու գոյք չունի: և նեղութեան մէջ է, մինչեւ պարտքն հատուցանէ: Շատ մեղաւոր համարուած կինը և քիչ մեղաւոր համարուած փարիսեցին՝ այս նեղութեան մէջ են փոխատուին—Փրկչին առջևն, որոց մին ճաշի կհրաւիրէ միայն և սեղան կրազմեցնէ: իսկ միւսը՝ չհամարձակիր երեսն ելլել, ետեւի կողմէն կեցած է, չհամարձակիր խօսել: այլ լազ կլինի: սիրտ կառնէ կմերձենայ, ոսքը կլուանայ, կծնջէ: և անոյշ իւղով կօծէ, շնորհակալ կլինի, որ ընդունուեցաւ և չմերժուեցաւ: Եյս առակն առաջարկելով կհարցնէ Փրկիչը, թէ փոխատուն շնորհեց երկուքին ևս վասն զի վՃարելու գոյք չունէին: Այժմ այն երկու պարտապաններէն ո՞րն աւելի պիտի սիրէ այն փոխատուն՝ որ պատքերնին բաշխեց:

43. «Ասոյ Սիշուն. ինչ այսպէս ինուի: թէ որո՞ւ որ շատը բաշխեց»:

Փարիսեցին՝ առանց զիտնալու առաջարկուած առակին միտքն, ըստ որում իւր հայեացքին յարմարող մի հաշիւի կերպ էր, վՃռեց: թէ որուն, որ շատը բաշխեց: նա՝ շատ պիտի սիրէ: Այսպէս վՃռեց փարիսեցին, և կոպասէր նոյն իսկ Փրկչի վՃռին, թէ ինչ պիտի պատասխանէ իւր խընդ-

թին, և լուծէ իւր երկրայութիւնը, թէ մարգարէն չիմացաւ, թէ իրեն մերձեցողը՝ մեղաւոր է:

43. «..... Եւ նա (Յիսուս) ասաց նորան. ուղիղ վճռեցիր»:

Հաւանեցաւ Փրկիչն այս վճռին, զոր վճռեց փարիսեցին. և զի փարիսեցին լրիւ չիմացաւ Փրկչին միտքը, կակսի Յիսուս՝ հասկացնել նորան՝ ըստ այսօք:

44. «Եւ հաջ իշխու բառաւումը ասաց Ալեքսանդր. իունիսի այս ինը. ու ուսանը յար, չուր առաջիր սուբելուսու, ինչ ամ՝ իւր արտապատճեց լուսաց սուսու, և իւր մատելու ջնջեց»:

Երբ Յիսուս դարձաւ կնոջը նայեցաւ, փարիսեցին իսկոյն իմացաւ, որ Փրկիչն՝ իւր տարակյալը լուծելու է, և ականջը տնկած կլսէ. թէ փարիսեցին հիւրասիրել է, բայց ո՛չ հիւրասիրութեան ամբողջ օրէնքովն, ըստ որում ոտքերը լուացած չեր. իսկ մեղաւոր կինն՝ իւր արտասուբովը լուաց՝ ջուր չունենալու դիպուածումն, և մաղերովը ջնջեց՝ ուրիշ հասարակ ջնջոց չունեցած գէպքումն. Եւ ո՛չ այսչափ միայն:

45. «Դու Ք համբար յառաջի ին (Համբարէնի դիմ), ու ահապատի հասանչել է վեր սուբերու համբարէնի յառաջուց»:

Արտասուբով աղաչեց, ոտքերս լուանալով ու ջնջելով սպասաւորեց, և սրտի յօժարութեամբն ու հոգւով կերկրպագէ կպաշտէ զիս՝ ոտքերս համբուրելով անդադար. Մեղաւոր կնոջ այս արարքը՝ նորա սրտի յօժարութիւններու ցոյցերն են, որ կառաւելուն քան զփարիսեցւոյն ճաշն. և աւելի ևս ապաշխարութիւնն և առ Աստուած գառնալու հաստատուն մտադրութիւն կցուցնեն. և որ ճանաչեց, թէ մեղքերը վերցնողն է, և իւր մեղքերուն թողութիւն կինդրէ՝ ոչ խօսքով, այլ իսոնարհութեան և հնագանդութեան գործերով:

46. «Եւ չը չհետիր իմ իւրական առ անոյշ իւղով ժնջեց»:

Փարիսեցին ընդունեց զՏէրն՝ միայն մի ճաշ տալով, և իւր մեծութեան շափով չզովացցց ընդունած հիւրին, և չօծեց. իսկ մեղաւոր կինը՝ թանկադին իւղով օծեց. այսինքն ընդունեց իրրե թագաւոր:

47. «Առան որոյ իտում ունը նորուած լինին ոորոն՝ իւր շուր մեղերը, ըստ ու շուրէց»:

Այս վճռով լուծեց Փրկիչը՝ փարիսեցւոյն կասկածն, և հասկացուց, թէ մեղաւորն երբ շատ կսիրէ զԱստուած, կդառնայ մեղաց ճանապարհէն. և դարձող մեղաւորին կընդունի Աստուած, և ուրախ կլինի նորա վերայ՝ քան այն արդարոց վերայ՝ որ ապաշխարութեան պէտք չունին. Ասսն որոյ և այն մեղաւորին մեղքը կիմողու. վասն զի շատ սիրեց, ինչպէս և փարիսեցւոյն խելքն հասաւ սկիզբէն, թէ որուն որ շատն շնորհէ, նա առաւել պիտի սիրէ. Մեղաւոր կինն իմացել էր, թէ փրկիչը կընորհէ մեղաւորնե-

ըու մեղքներն՝ եթէ դառնան իրենց ճանապարհէն. վասն որոյ և գարձաւ,  
իւր մեղաց շատութեան չափովը շատ սէր ցոյց տուաւ:

47. . . . զէ որու ո՞ւ շոր ինէլուն՝ շոր ինէլ, և ո՞ւ ո՞ւ ո՞ւ ո՞ւ (ինէլուն):

48. Առ առայ նորան. ինունուն վնին + էլ + մէջէլը:

Փարիսեցյն հետ կիսուէր Փրկիչն՝ այս թողութեան վարդապետութիւ-

նըն հասկացնելով, իսկ կինը կշարունակէր իւր գործը. մինչև իրեն գար-

ձաւ Փրկիչն, և ասաց. թէ «թողուած լինին քո մեղքերը», որով կհաս-

կցնէր նորան. թէ ընդունուած է իւր ապաշխարութիւնն և հաւատքը,

կցնէր նա գեռ ևս կեցած էր և չէր հեռանար: Փարիսեցի Սիմովնն հաս-

րայց նա գեռ ևս կեցած էր և չէր հեռանար: Փարիսեցի Սիմովնն հաս-

րայց նա գեռ ևս կեցած էր և չէր հեռանար: Փարիսեցի Սիմովնն հաս-

րայց նա գեռ ևս կեցած էր և չէր հեռանար: Փարիսեցի Սիմովնն հաս-

րայց նա գեռ ևս կեցած էր և չէր հեռանար: Փարիսեցի Սիմովնն հաս-

րայց նա գեռ ևս կեցած էր և չէր հեռանար: Փարիսեցի Սիմովնն հաս-

րայց նա գեռ ևս կեցած էր և չէր հեռանար: Փարիսեցի Սիմովնն հաս-

րայց նա գեռ ևս կեցած էր և չէր հեռանար: Փարիսեցի Սիմովնն հաս-

րայց նա գեռ ևս կեցած էր և չէր հեռանար: Փարիսեցի Սիմովնն հաս-

րայց նա գեռ ևս կեցած էր և չէր հեռանար: Փարիսեցի Սիմովնն հաս-

րայց նա գեռ ևս կեցած էր և չէր հեռանար: Փարիսեցի Սիմովնն հաս-

րայց նա գեռ ևս կեցած էր և չէր հեռանար: Փարիսեցի Սիմովնն հաս-

րայց նա գեռ ևս կեցած էր և չէր հեռանար: Փարիսեցի Սիմովնն հաս-

րայց նա գեռ ևս կեցած էր և չէր հեռանար: Փարիսեցի Սիմովնն հաս-

րայց նա գեռ ևս կեցած էր և չէր հեռանար: Փարիսեցի Սիմովնն հաս-

րայց նա գեռ ևս կեցած էր և չէր հեռանար: Փարիսեցի Սիմովնն հաս-

րայց նա գեռ ևս կեցած էր և չէր հեռանար: Փարիսեցի Սիմովնն հաս-

րայց նա գեռ ևս կեցած էր և չէր հեռանար: Փարիսեցի Սիմովնն հաս-

րայց նա գեռ ևս կեցած էր և չէր հեռանար: Փարիսեցի Սիմովնն հաս-

րայց նա գեռ ևս կեցած էր և չէր հեռանար: Փարիսեցի Սիմովնն հաս-

րայց նա գեռ ևս կեցած էր և չէր հեռանար: Փարիսեցի Սիմովնն հաս-

րայց նա գեռ ևս կեցած էր և չէր հեռանար: Փարիսեցի Սիմովնն հաս-

րայց նա գեռ ևս կեցած էր և չէր հեռանար: Փարիսեցի Սիմովնն հաս-

Հրամայելիք ո՞ր խօսքն աւելի զիւրին է, թողեալ լիցին քեզ մեղք քո» ասելն, թէ «Արի և գնա» ասելն, և երբ նոքա ասացին, թէ «Արի և գնա» ասելը՝ դժուար է, Փրկիչն այս ևս ասաց անդամալուծին, և նա իսկոյն վեր կացաւ և գնաց. որով համոզուեցան, թէ Քրիստոսն էշխառութիւն ունի մեղքերը. թողելու, եթէ մեղաւորներն հաւատան, Փարիսեցւոյն սեղանին վերայ այսպէս ուսոյց Փրկիչը, մեղաց թողութեան և հաւատոց վարդապետութիւնը.

Բ. 1. Եւ այս երան առաջնութէ և քիւլութէ անցնելով իւրից, իւրագլու, և Աստուածա, Առաջապահնեան իւրագործութէ, և առանելով (առաջի անձն) և նոր հէոր (իւրագլու և իւրագործութէն):

Փրկիչն՝ Նրէաստանի քաղաքներէն և գեղերէն կարգաւ կանցնէր և կքարոզէր, կուսուցանէր, Աւետարանչի այս համառօտ պատմականը կարդալով, մի հարց կզարթնի մեղանում թէ ինչ կուսուցանէր Փրկիչն ինչ դիտութիւն կուսուցանէր, Այս հարցին պատմախանը՝ դարձեալ աւետարանչի ուրիշ անգամ մէջ բերած ուսումէն միայն կարելի է հետեցնել Աշխարհում երեցած և զգացնեած ամեն առարկաներն՝ իրենց պիտանութեան զիտութիւնն ունին, որոնց հմտութիւնը կլուսաւորէ զմարդ բայց Փրկիչն՝ այսպիսի լոյս չէր քարոզէր. այլ Փրկչին քարոզած ուսումն այն էր, որ մարդու ինչ եղածը կուսուցանէր. մարդկային տնտեսութիւնը կուսուցանէր՝ նորա ծագումէն մինչև կատարումն՝ յանմահութիւն փոխուելն: Ինչպէս որ ամեն առարկայ իւր պիտանութեան գաղտնիքն ունի, և այն գաղտնեաց գիտութիւնը կամ հմտութիւնը կլուսաւորեն զմարդ, նոյնպէս և մարդն՝ իրեւ մի առարկայ՝ իւր պիտանութեան գաղտնիքն ունի, և այս գաղտնեաց գիտութիւնը կամ հմտութիւնն՝ ոչ միայն լուսաւոր կանեն զմարդ՝ ինչպէս ուրիշ առարկաներու գիտութիւնն, այլ միանդամայն՝ կատարեալ կանեն զմարդ, մարդ՝ և թէ բոլոր առարկաներու գիտութիւնը գիտնայ, և մարդու գիտութիւնը չգիտնայ, թէեւ կունենայ լուսաւորութիւն, բայց կատարեալ մարդ՝ չէ մարդս՝ կային տնտեսութեան գիտութեամբ. այսինքն՝ գիտնալով թէ ինչ է մարդը, և թէ ինչ պիտի լինի իւր վախճանը. և թէ ինչպէս կարող է հասնել այն վախճանին՝ որուն համար որ սահմանուել է, Փրկչին քարոզած և ուսուցած ուսման մասին՝ Պօղոս առաքեալն այսպէս կպարզաբանէ.

«Եթէ պեղուս մարդկան խօսիցեմ; և զհրեշտակաց, և ոէր ոչ ունիցիմ, եղէ եռ իբրև զպղինձ՝ որ հնչէ. կամ իրեւ զննծզայս՝ որ զօղանչեն: Աւ եթէ տնիցիմ՝ զմարդարէութիւն, և գիտիցեմ՝ զխորհուրդս ամենայն և զամանայն գիտութիւն, և եթէ ունիցիմ զամանայն հաւատոց մինչեւ զլերինո պիտիսելոյ, և ոէր ոչ

ունիցիմ; ոչինչ եմ; Եւ եթէ ջամբիցեմ զամենայն ինչս իմ՝ աղքատաց, և մատնիցեմ դմարմինս իմ յայրումն, և սէր ոչ ունիցիմ; ոչինչ օգտիմ; Ոէր՝ երկայնամիտ է, քաղցրանայ. սէր՝ ոչ նախանձի, ոչ ամպարհաւածէ, ոչ հպարտանայ, ոչ յանդգնի, ոչ ինդրէ զիւր, ոչ զրգոի, ոչ խորհի զշար, ոչ խնդայ ընդ անիրաւութիւն, այլ՝ խնդայ ընդ ստուգութիւն, ամենայնի տեէ, ամենայնի հաւատաց, ամեննե ին յուսաց, ամենայնի համբերէ. սէր՝ ոչ երբէք անկանի. եթէ մարգարէութիւնը են՝ խափանեսցին, եթէ լեզուք՝ լռեսցեն. եթէ գիտութիւն՝ խափանեսցի. քանզի փոքր ի շատէ գիտեմք, և փոքր ի շատէ մարգարէ անամք, այլ յորժամ եկեսցէ կատարումնն փոքր ի շատէս խափանեսցի: Մինչ տղայն էի, իրրե զտղայ խօսէի, իրրե զտղայ խորհէի, իրրե զտղայ համարէի, այլ յորժամ եղէ այր, զտղայութեանն ի բաց խափանեցի: (Ա. Կորնիժ. Ժ. 1—11):

Մարդկան և հրեշտակաց լեզուներն գիտնալ՝ որ մեծ գիտութիւն է աշխարհիս ամեն տեսակ գիտութեանց հետ համեմատելով և միւնոյն ժամանակ սէր չունենալ որ մարդկային կատարեալ տնտեսութեան բուն ոգին է՝ այնպիսի գիտութիւնն կհաւասարի պղնձի և ծնծղայի զօղանչիւնին: Առաքելոյն այս համեմատութենէն կհետեւի, թէ Փրկիչը կքարոզէր՝ սէր ուսուցանելով: Մարգարէութիւններն հասկանալ և ամեն գիտութիւն ունենալ, և մինչև իսկ լեռներն փոփօխելու հաւատքն ունենալ՝ որ աշխարհիս գիտութեանց բարձրագոյններն են, և մարդկային տնտեսութեան մեծ օգուտ, և այս ամեն շնորհաց հետ սէր չունենալ այնպիսի շնորհքն՝ ոչինչ կհամարի առաքեալլ: Այս համեմատականէն ևս կհետեւի, թէ Փրկչին ուսուցածը՝ սէր էր, Աւնեցածն՝ աղքատներու բաշխել՝ և չարչարանք ունեղութիւն յանձն առնել՝ և միւնոյն ժամանակ սէր չունենալ, այս առաքինութիւններն ևս անօգուտ կլինին. առաքինութիւնն ևս ընկերութեան վերայ հիմնուած է, առանց ընկերութիւններ եղած առաքինութիւնը՝ րոպէական երևոյթ միայն է: Այս համեմատականէն ևս կհետեւի, թէ սէր, ընկերութիւն կուսուցանէր Փրկիչը: Առաքեալլ՝ պարզաբար մէջ կրերէ սիրոյ առաւելութիւններն, այնպիսի առաւելութիւններ, որ մարդուն կատարելութեանն անհրաժեշտ են:

Աշխարհիս ամեն գիտութիւններն՝ համեմատելով մարդկային կատարելութեան գիտութեան հետ՝ տղայական գիտութիւններ են. ինչպէս որ մարդ՝ չափահաս եղած ժամանակը՝ տղայութեան խօսքերը, խորհուրդները և համարմունքը՝ կթողու, զանց կանէ, անպէտք եղածը կիմանայ, այս-

պէս ևս մարդկային կատարելութեան գիտութիւնն ունեցողն՝ այսինքն ընկերսիրութիւն ունեցողն՝ աշխարհիս ամեն գիտութիւնները տղայական կդժնէ, և ոչինչ չօգտիր նոցամէն։ Զորօրինակ՝ հիւանդութիւն վերցնող գիտութիւնը՝ զոր աշխարհի գիտութեանց կարդումը բժշկութիւն կանուանենք՝ մեծ գիտութիւն է, և մարդկան օգտակար բայց եթէ մարդկային կատարելութեան գիտութիւնն ունենանք, այնտեղ հիւանդութիւն չկայ. ուրեմն բժշկութիւնն անօգուտ կդառնայ, ճիշդ այսպէս՝ աշխարհիս ամեն գիտութիւններն՝ որոնք աշխարհիս ամեն առարկաներու պիտանութեան գաղտնիքներուն հմտւտ կանեն, այն ամեն գիտութիւններն՝ համեմատելով մարդկային կատարելութեան գիտութեան հետ՝ ոչինչ են և անօգուտ Մարդկային կատարելութեան գիտութիւնը՝ զոր կուսուցանէր Փրկիչը՝ սէր է, ընկերսիրութիւն. սիրոյ վերայ հիմնել մարդկային կենաց անտեսութիւնն, որով միայն պիտի համար մարդ՝ իւր բուն կատարելութեան։

Փրկչի վարդապետութեան մէջ կտեսնենք ևս, որ կուսուցանէ մարդկային այս կատարելութիւնն, աստուածասիրութեան պատգամներու բացառութեամբ, և Աստուծոյ պատգամներն համառօտելով մը կուսուցանէ օրինականին մէկին.

«Սիրեսցես զտէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ և յամենայն անձնէ քումմէ և յամենայն մտաց քոց, այս է մեծն և առաջին պատուիրան, Եւ երկրորդն՝ նման սմին. Սիրեսցես զընկեր քո՝ իրրե զանձն քու Յայս երկուս պատուիրանս ամենայն օրէնք և մարդարէք կախեալ կան» (Մատ. ԻԲ. 38—40, Մարկ. ԺԲ. 29—31, Պուկ. Ժ. 26—28):

Արդ՝ Փրկչին ուսուցած բուն կատարելութիւնն է Աստուածսիրութիւն, և որ կատարեալ կլինի ընկերսիրութեամբ. ըստ որում աստուածասէր եղողը՝ պիտի պահէ Աստուծոյ պատուիրանը. որ է ընկերսիրութիւնն Աստուածսիրութիւնը. սրտի և մտաց ցանկալի խորհուրդն է, իսկ ընկերսիրութիւնը՝ նոյն նպատակին համենլու գործողութիւնը։ Փրկիչն այսպէս կուսուցանէր, ու միւնոյն ժամանակն՝ «Աստուծոյ Շահապարհութեան Համեմատութեան»։ որ ասել է, թէ Աստուած սկսել է իւր թագաւորութեան լցոն ու շնորհքը տալ մարդկան. որպէս զի լուսաւորուին մարդիկ Աստուծոյ լուսովն, և կատարեալ լինին. և պահեն Աստուծոյ թագաւորութեան կանոններն, որով միայն պիտի հաղորդ լինին Աստուծոյ թագաւորութեան անմահ կեանքին։

Այս ուսումը կքարոզէր Փրկիչը՝ գիւղէ գիւղ և քաղաքէ քաղաք կարգաւ շրջելով. և երկոտասան առաքեալները նորա հետ էին. արդէն զգացել էին Աստուծոյ թագաւորութեան աւետարանի ձգտումն, ու չէին կարողանար հեռանալ. և հետը կշրջէին. Այս տասներկուքին յատկապէս ընտրեց փրկիչն՝ իւր աշակերտներէն, և առուել անուանեց, որով և յայտ-

Նի արաւ իւր միաքն, թէ մի որեւէ գործի պիտի ևրկէ զնոսա. (Պ.ռկ. Զ., 13). Միայն թէ առ այժմ իւր հետ կըրջեցնէ, որ նոքա ևս վարժուին, թէ ինչ պիտի սորվեցնեն ժաղովրդեան, և ի՞նչպէս պիտի սորվեցնեն.

2. «Եւ մ առ ի առ այսուհետեւ որ շոր այսերեւ և հիւնաբութիւնն ընձլվուած էին, առ դրանցիւ քըլուած առ այսուհետեւ որ մեն եւն ուն եւր Յամանան, և եւ ըստ առ այսուհետեւ հաշորուած քըլուած էին, և օսուան, և սուրեւ շատերն՝ որոնտ նորու պէտուերն իշուային էրէնց նշանեւն»:

Երկուասան առաքեալներէն զատ՝ այս կանայքն ևս Փրկչին հետ կըրջէին, և իրենց ունեցած ստացուածքներնէն՝ Փրկչին պէտքերն կհօգային։ Այս կանայքն ևս զգացել են Աստուծոյ թագաւորութեան Աւետիսը՝ զոր Փրկիչը կաւետարանէր, և փորձով իսկ զիտեն, որ Աստուծոյ արքայութեան կեանքումն հրւանդութիւն չկայ, այսահարութիւն չկայ։ մինչդեռ աշխարհիս հարստութեան կեանքը՝ կատարելապէս հիւանդութիւն է, և ախտաւորութիւն և այսահարութիւն, որմէ այն ինչ ազատուել էին այս կանայքը՝ Փրկչին ուսուցած վարդապետութեան հաւատալով։ Մեծատուն կանայք, Հերովդէսի՝ Գալիլիոյ թագաւորին հազարապետին կինը՝ որ Հերովդէսի պալատական ամեն հանդէսներուն թերես մաւնակիցն էր, թողել է զայն, թողել է իւր տունը, և Փրկչին հետ կըրջի. կվախնայ, Փրկչին բաժանուելու, թէ մի գուցէ այն հիւանդութիւններն զարձեալ գտնեն զինքն և բոնեն։ Մարիամ մագդաղինացին այնպիսի մի հոգւով կապուած է Փրկչին խօսքերուն, որ մինչեւ իսկ խաչելութեան վայրումն ըբաժնուիր նորամէն. մինչդեռ կիսաչին զՓրկիչն իրրե մի մեծ յանցաւոր ընդդէմ Հռոմայիցւոց տէրութեան և ընդդէմ Հրէական սրբութեանց. աշխարհիս մարդիկն՝ այսպիսի գէպքերումն հեռի փախչող են. բայց այս կինը չփախչիր, մինչեւ իսկ թաղմանէն ետքը՝ շարաթ իրիկուն գերեզման կդնայ Հրեշտակի տեսիլէն կահարեկի (Մատ. ԽԸ. 1—8). և կիւրակէ առաւօտ գարձեալ կդնայ (Մարկ. ՖԶ. 1. Յով. 1. 1): Աստուծոյ Արքայութեան աւետիսն՝ այսպէս կդրաւէ կատարելութեան ձգտող հոգիներն, Այս երկու կանանց ոգին ունէին և ուրիշ շատերն՝ որ Փրկչին հետ կըրջէին, և ամենքն ևս հարուստ ընտանիքէ էին։

Եւ ոչ միայն այս կանայքն, այլ նոյն իսկ զիւղացի և քաղաքացի ժողովուրդներն՝ որ միանգամ կլսէին Փրկչի քալոզը, չէին կարողանար հեռանալ մէկէն, և իրենց գործին գառնալ, այլ նորա ետևէն կըրջէին մինչեւ մի քանի քաղաքներ և զիւղեր, ինչպէս որ կակնարկէ այստեղ աւետարանիչն՝ ասելով։

4. «Եւ երբ շոր ժողովուրդ իւրական էր, և իւրական ամէն առաջնուններն նորու եւսներն (իւրադիմէն), առաջ առաջնունն»։

Գիւղերէն եկողներն՝ ընդհանրապէս երկրագործ ժողովրդեան դասակար-

գին կպատկանէին. իսկ քաղաքներէն եկողներուն մէջ կլինէին ամեն դասակարգի մարդկիկ՝ մեծատուններ, արքունի պաշտօննաներ, Հրէից իշխաններ, քահանաներ, օրինականներ ու դպիրներ. փարիսեցիներ ու սաղուկեցիներ, որոնք լսու մեծի մասին աշխարհի իշխանութեան և փառաց հետ հազորդէին, և Փրկչին վարդապետութեան կհակառակէին. թերես այս հակառակութիւնն ի նկատի ունելով Փրկիչն՝ իւր քարոզութեան ձեւ կը փոխէ. և առակով կխօսի, Թէպէտ քաղաքացի ժողովրդեան մէջ ևս կային, որ իրենց հիւանդներն ու այսահարները կրերէին, և կպաշտէին զՓրկչն, Բայց աշխարհասէր քաղաքացիներու բազմացած ժամանակն, կակսի առակով խօսել և առակին հետեւելն է:

5. «Սէր առաջանձուն էւս . . . ո՞ւ է՞ր ուշութը ըստնէ. և պատես ժողովակը՝ իու՞ ո՞ւ ժամանակը կը վերաբարձրէ վերաբարձրէ, և լուսաւուցուն և լուսաւուցուն վերաբարձրէ. 6 ես . . . իշխանութիւնը վերաբարձրէ վերաբարձրէ լուսաւուցուն. ովէս չորոշում՝ հիշու նիշելուն պատ ժամանը 7. ես . . . իշխանութիւնը վերաբարձրէ վերաբարձրէ և լուսաւուցուն և լուսաւուցուն իշխանութիւնը 8. ես . . . իշխանութիւնը և առաջանձուն երիտարար երիտարար և բարու և ուրիշ առաջանձուն իշխանութիւնը:

Փրկիչն՝ այնպիսի մի առակ կընտրէ. որ աւելի ևս հասկանալի է երկրագործ ժողովրդին, քան քաղաքացի ժողովրդին. այս առակին բովանդակած իմաստն՝ անհասկանալի մնաց բոլոր ներկայ եղանակներուն. վասն որոյ և կաւելցնէ Փրկիչն՝ հետաքրքիր անելով ցանկացողները:

8. «. . . Զայս երբ խօսենաւ, առաջ. լուսաւութը ունենալ անոնց լուսաւութը: Այսինքն՝ թէ ով որ կամենայ հասկանալ, կամ հասկանալու մտքով առ կանչ կանչ, թող վերստին լսէ: Եյս պատճառով իսկ աշակերտները կը հարցնեն յետոյ:

9. «Աշուիքուներն ինորդնեն նորուն. թէ ի՞նչ էր այս առաջնորդն: Եթէ աշակերտներն հասկացած չեն, և կհարցնեն, որ պարզապէս լսեն, կիշտեի, թէ միւս բազմութիւնն ևս չհասկացան: ըստ որում Փրկչի սորտ վեցուցածին աւելի հմուտ էին աշակերտներն, որ կանուխէն նորա հետ էին:

10. «Եւ նո առաջ. զեւ որումն է վիայուն Առաջնորդութն իսրահութներն (Քայլանիներն), բոյց առջնորդուն առաջնորդուն որովէն ու առաջնորդուն, և լուսն, և լուսաւուն:

Եյս բացատրութեամբ կհասկացնէ Փրկիչը, թէ ներկայ եղող ժողովրդեան մէջ՝ Աստուծոյ արքայութեան աւետարանին հակառակող աշխարհասէրները շատ էին. և որպէս զի չարհամարհէն Աստուծոյ խօսքն, և ժամանակի լրումէն կանուխ չզրգութին, մինչև որ Աւետարանը քարոզէ ինքն Փրկիչն ամեն գիւղերումն և զաւառներումն, այս նպատակաւ բացայայտ քարոզութիւնն՝ առակի կփոխէ: Իսկ աշակերտներուն համար կմեկնէ առանձինն:

11. «Բայց առաջն՝ այս է։ Աերձ՝ Առաջնորդու իշխան է։ 12. Եւ հանուղունի վեցը ինչ-այնուն նոտան, որ լունն, ետք առաջան իսպա, նոյս որոնն ինանէ այն իշխան, որով ոչ չկատարուած, և շաղըն»։

Կակնարկէ այն կարգի ունկնդիրներն, որոնք կլսեն, և կիմանան Աստուծոյ արքայութեան օրէնքով ապրելու կեանքի առաւելութիւնը, բայց նոցա ախորժակներումը միանգամ քաղցրացած է աշխարհիս չարութիւնը, և չեն կարող թողուլ չարն ու հետեւ արդարութեան։ Եյսպէս են ընդհանրապէս աշխարհիս հարստութեան և իշխանութեան փառքերովն հպարտացող մարդիկը։ Փրկիչն՝ այսպէս կակնարկէ այն ժամանակուայ ունկնդիրներուն, բայց ակնարկութիւնը՝ նոյնութեամբ կյարմարի և այժմ մեր ժամանակի ո՛չ քրիստոնեայ ժողովրդոց և քրիստոնեայ անուան տակ ծածկուած մի շարք հպարտներուն, որոնք կանգամին մինչև իսկ Աստուծոյ գոյութեան հաւատքը մերժելու. և ինքզինքնին զիտուն կհամարին։

13. «Եւ ապաստելի վեցը ինչ-այնուն էն, որ երբ լունն ինդունիս այն իշխան և այսուունել չունեն, որոնտ մի ժամանակի կիմանան, և կուրունելի ինեւանան։

Կակնարկէ այն չհասկացողներուն, որոնք հասկացող երենալու համար միայն կհետեւին մի որեւէ նոր գաղափարի կամ ճշմարտութեան, և եթէ նորա մէջ որեւիցէ գժուարութիւն տեսնեն, իսկոյն կթողուն, և մի ուրիշ նորութեան կհետեւին։ Փրկչին ակնարկած փորձութիւնը, որ արքայութեան հաւատացողներուն կպատահին, երկու տեսակ են, որոց մի տեսակն՝ աշխարհասէր մարդկան, արուցած հալածանքն է, և միւսն՝ ընդհանրապէս այս աշխարհի մարդկոյին տնտեսութեան մէջ պատահած նեղութիւններն են, ինչպէս են քաղցածութիւն, մերկութիւն, ազգականներու և բարեկամներու ատելութիւն և տնտեսութիւն։ Արքայութեան աւետարանի քաղցրութեան ճաշակն առնող հաւատացեալն՝ այս փորձանքներումն ևս կտեւէ սիրով և ընտիր կգտնուի։

14. «Իո՞ւ վշերու մէջ ինուան՝ նոտան էն, որ երբ այն իշխանը լունն, աշխարհին հայտնին՝ մէծունելու և շանհանուն կը բարձրացն։ և ինեւանութիւնն առ անդունու իւնին։

Կակնարկէ այն կարգ մի աշխարհասէրներուն, որ ըստ աշխարհի վայելչութեան ձեռք բերած ունին հարստութիւն ստացուածոց՝ և իշխանութիւն, և նոցա հոգսերովն զրաղած, կմոռանան արքայութեան աւետարանի աւետած անմահութիւնն—յաւիտենական կեանքն, որոնք աւելի կհետեւին, որ այս աշխարհի կեանքն յերկարեցնեն, և եթէ չնարը գանեն, երբէք չծերանան և չմեանեն, այս աշխարհի վայելչութեանն ու փառքն այնպէս կուրօրէն կապուած են, թէն կհասկանան։ որ այն ունեցածնին ստացուածըն՝ որքան ալ սիրեն, դարձեալ պիտի թողուն ուրիշին։ Միենոյն ժամանակը նաև կզգան, թէ իրենց վայելչութիւնն՝ ուրիշ ընկերնե-

բու տառապանքովը միայն կպատրաստուի իրենց, և իրենք չեն խղճեր:

15. «Ե՞ս պարորդ քեռուսամ ինչ-ծնելոն ( էն ), ու բարի և ուրուի որուն իշլեն այն իշուն, և համբերելով պորուշ իշուն»:

Կակնարկէ այն հաւատացեալներուն, որոնք արքայութեան աւետարանի աւետիսն զգալէ ետքն, այլ ևս ոչ մի արգելք չունին, այլ կհամբերեն ամեն տեսակ հալածանքի և փորձանքի, և իրենց անձին օրինակովն ու խօսքով սորվեցնելով կտարածեն աւետարանի լոյսն՝ ուր որ հասնեն: Մասնաւորապէս կակնարկէ թերես նաև տասներկու առաքեալներուն, և այն կանանց՝ որ հետը կշրջէին, Արքայութեան պտուղը պտղարերող հաւատացեալներն՝ համբերութեամբ միայն պիտի հասցնէին իրենց պտուղն. ըստ որում աշխարհի իշխանը՝ չարի և խաւարի իշխանութիւնն՝ իւր անկումը պիտի տեսնէր նոցա արիութեան մէջ. թէպէտ ինքն Փրկիչ, յաղթեց աշխարհին: բայց չարին իշխանութիւնը կմաքասի Աստուծոյ որդւոց գէմ մինչեւ ի կատարած աշխարհի. և Փրկիչն ինքն կլսուտանայ, թէ այնպիսի գիպուածներում նոցա հետ է մինչեւ աշխարհիս վերջանալն, մինչեւ որ սատանայի իշխանութիւնը խորտակուի:

Այս ակնարկութեան վերայ թերես առաքեալներն առարկեցին. թէ կըզգուշանան և կծածկուին աշխարհի իշխանութեան երեսէն, և առանց հաւածանաց կկատարեն իրենց առաքելութիւնը: Որոց կպատասխանէ:

16. «Ու ո՞ւ ին-ցէ ճըտին և ին-արդին ի-որունի ո-ոչ ի-ուն և-ան-ի ո-ոչ: ոյլ ու-շունունի ի-ուոյ ի-ուն, որուն ո՞ւ մ-ուս-ը-էրը՝ լոյս ու-եւն-են: 17 Ռուն-ի բան չի ու յայտնի չինի. և ո՞ւ ք-ուշունի՝ որ չ-ուն-ցունի և յ-ուլու. չ-ոյ:

Փրկիչը՝ բացարձակապէս կասէ առաքեալներուն, թէ կուսուցանէ զիրենք ո՞չ այն նպատակով, որ նոքա ծածկուին աշխարհի իշխանութենէն. այլ՝ որպէս զի լոյս լինին աշխարհը բոնող խաւարին մէջ, և իրենց հետևողներն լուսաւորեն: Եւ աստուածային ամենատես գիտութեամբ կվրձռէ, թէ ամեն ծածուկները պիտի յայտնուին, և ամեն գաղտնի պահուածներն յերեան պիտի գան: սոյնպէս և Աստուծոյ արքայութեան աւետարանը տարածողներն՝ յայտնի պիտի լինին խաւարասէր իշխանութեան՝ աշխարհի ամեն կողմերում:

18. «Ն-ու-ն-ե-ու- ու-է-է- ի-ու-է- ո՞ւ ոյլ ի-ու-է- վ-ու-ն-ի ո-ո-ն-ց-ո-նին ո-ի-ո-նի ո-ը-ո-նի: և չ-ու-ն-ե-ց-ո-նին՝ ինչ որ ո-ո-ն-ե-ու- ի-ու-ն-ի, այն ևս պի-ո-նի ո-ո-ն-ե-ու- ն-ը-ո-ն-ին:

Այս յորդորակը կուղղէ այն աշակերտներուն, որոնք որ՝ պարարտ երկրումն ինկած սերմին նմանելու ցանկութիւնն ունին ով որ ունի այս ոգին, հաւատքը, նորան կաւելացնուի ևս իսկ որն որ չունի այս ոգին, նորամէն բոլորովին պիտի պակսի նաև այն հաւատքն՝ որ կկարծէ թէ ունի, և պիտի նմանին նոքա ապարդիւն սերմերուն՝ որոնք որ ճանապարհի վերայ, ապառաժի վերայ և փշերու մէջ ինկան:

19. «Նորա մար եկան նորու ժայրն ու եղբայրներն, և բաղմանեան պատճառակն չեն իշխանութեան նորու հասնել։ 20. Եւսց արուեցու նորուն, և առաջին. Մայրդ և եղբայրները դաշտու իցել են, և դժեռ առենել իսուղին։»

Խնչպէս վերեռումն ակնարկեցինք, Փրկիչն՝ իւր քարոզութեան պարզ խօսքն առակի փոխեց՝ երբ զանազան քաղաքներէն շատերն եկան ժողովեցան. և արգէն իսկ փարիսեցւոց հակառակութիւնն սկսուած էր, և հետըզիետէ աւելի ևս կչարանային. փարիսեցւոց չար խորհուրդն յայտնի եղել էր Փրկչին մօրը, և ազգականները ժողովել եկել էր, որ մի կերպն հնարի զՅիսուս ազատելու նոցա ձեռքէն. և այս մտքով իսկ բազմութենէն գուրս կկոչեն զնաւ. Փրկիչը կիմանայ նոցա խորհուրդն, որ փորձութենէ հեռանալ միայն պիտի թելագրեն։ կմերժէ այս խորհուրդը։

21. «Եւ իսուկ նոցա (իւրա ուսուցնելուն), Մայր և եղբայրներն՝ սուս են, որ Աստուծոյ իւսուց իւսուց իւսուց և իւսուց։»

Այսպէս կմերժէ իւր մօրն ու եղբայրներուն խորհուրդն՝ որ Աստուծոյ խօսքն համարձակ քարոզելէ արգելել կիսրհէին. և իւր մայրն ու եղբայրները լինել կցուցնէ այն ունկնդիրներն՝ որոնք որ առակին մէջ՝ պարարտ գետնումն ինկած սերմերուն արդիւնաբերութիւնն ունենալ կիսրհէին։

Փրկիչն՝ իւր ազգականներն՝ եղբայր կանուանէ ըստ ընդհանուր սովորութեան Հրէից և արևելեան ազգերու՝ որ միւնոյն յարկի տակ ընակողներն ևս եղբայրներ կանուանեն։ Աւետարանին այս խօսքն՝ ոմանք առիթ արած են, և կպնդեն, թէ Աստուածածին Մարիամն՝ ուրիշ որդիի ևս ունէր և այս կպնդեն ոմանք այլ նպատակով, և ոմանք այլ նպատակով, և իրենց նպատակին հասնելու մեծ փաստ կհամարեն։ Բայց խաչելութեան միջոցին կտեսնենք, որ Յիսուս՝ իւր մայրը կյանձնէ Յովհաննէս աւետարանչին. եթէ Մարիամ՝ ուրիշ որդի ունեցած լինէր, այս յանձնաբերութիւն տեղի պիտի չունենար. Աւետարանչի այս վկայութիւնն՝ այն գայթակղեցուցիշներու փաստը կհերքէ բոլորովին. Յիսուսի եղբայրները կանուանուին՝ Յովհաննէսի որդիին՝ և նորա եղբօր որդիին։

22. «Եւ եղաւ որ այն չէրէն միամն ինչն նաև եւսու, նորա աշուիւրդներն են, և առաջ նոցա. Եիէտ, այս ժաշակի այն կողմն անցնեն։ Եւ քննոյն։ 23. Եւ իր ինուննին՝ ուսու եղաւ. և հազարյին մրինի ինու ժաշակն եր' ո՛ն, և իսուներ, և ինդուննին։ 24. Ուսունան, որ մնացացին դնա, և առաջին. ու արդառեա, ու արդառեա, ու ան իշխանութիւն։ Եւ նու միը իսուսու սուսուց հազըն և ջրեւս իսուսուն, և հանդարուեցան. ու իսուալութիւն եւսու։

Մայրն ու ազգականներն կսփափեն զՅիսուս, որ զգուշանայ փարիսեցւոց և իշխանաց գրգռութենէն. Փրկիչը կհնազանդի իւր մօր առարջակին, բայց ոչ թէ իւր գործը թողլով, այլ փոխանակ նոյն տեղերումն քարոզելու, կանցնի ծովուն միւս կողմն՝ աշակերտներովլ միասին. (Թէ Փրկիչն հնա-

զանդ էր իւր ծնողաց, կվկայէ աւետարանիչը՝ նորա տասներկու տարեկան ժամանակէն, երբ ծնողքէն բաժանուած, և տաճարումն էր մնացել, ու քահանայից հետ կխօսէր որ կզարմացնէր): Նաւակումն մի առանձին խորշ կմտնէ Փրկիչը և քուն կլինի. և ահա ալէկոծութիւն կսկսի սաստիկ, մինչև կվախնան աշակերտները, թէ նաւը պիտի խորտակի. կզարթեցնեն զՅիսուս, իբրև թէ կպահպանն զնա, որ մի գուցէ վտանգուի. և կթելադրեն, որ պատրաստ լինի, և եթէ որևէ վտանգ պատահի նաւին, զերծանին իրենք գէպ ի ցամաք, ըստորում ձկնորսներ էին, և այսպիսի վտանգներումըն զերծանելու կերպը գիտէին. երկիւղնին այն միայն էր, որ Փրկիչը՝ քնոյ մէջ չմնայ, և յանկարծ չվտանգուի: Իսկ Փրկիչը՝ կսաստէ հողմին և ալիքներուն և իսկոյն կհանգարտին:

### 25 «Առաջ նոյն... Ո՞ւ է հոսուածութիւնները...»:

Այս՝ այնպիսի մի յանդիմանութիւն էր, որ սթափեցնել կկամէր աշակերտները: Բայց նոքա չսթափեցան, այլ՝ Համբառ, Շաքարան, և Ակմենէտին: Ո՞ւ ո՞ւո՞ւ լինի որդէս+ ո՞ւ, որ հողմէրուն և ջրերուն հրաւան ի՞ո՞ոյ, և ի՞ո՞ոյնդին: Մինչ այս գէպքն՝ առաքեալներն տեսել էին, որ Փըրկիչն կկատարէր այնպիսի գործեր, որոնք մարդկային շնորհաց գործեր չէին. զորօրինակ՝ կոյրերուն՝ տեսութիւն կուտար, կաղերը կդնացնէր, անդամալցները կողջացնէր, մինչև իսկ նայինի արւոյն միակ որդին՝ որ մեռած էր՝ կանչեց, և ելաւ նստաւ գագաղումն. որ յայտնի ապացոյց էր, թէ մահն ևս կհեռանայ իւր աւարէն՝ Փրկչի հրամանովն. այս ամեն նըշանները կհաստատէին՝ թէ Փրկիչն՝ Աստուծոյ է, և աստուածային զօրութեամբ կներգործէ այսպէս: Բայց առաքեալները՝ գեռ ևս հաստատուած չէին իրենց հաւատքումն, և ալէկոծութեան վտանգէն զերծանել կզգուշացնեն զՏէրն: Իսկ տէրը՝ կյանդիմանէ նոցա անհաւատութիւնն, իւր աստուածային զօրութիւնը ցոյց տալով, որուն և հողմերն և ջրերը կհնազանդին: Նոքա գարձեալ չեն հասկանար. վասն զի ի մանկութենէ այնպէս ըմբռնել էին, թէ Մեսիան կուգայ, կթագաւորէ, և նորա թագաւորութեան վախճան չլինիր. և կպասէին, որ Փրկիչն՝ այս թագաւորութիւնն սկսէր. չէին գիտէր, թէ Քրիստոսն՝ Աստուած է:

Նոյն ինքն առաքելոց վերայ ևս կտեսնենք, որ մարդիկ մէկէն ի մէկ չեն կարող ըմբռնել աստուածային զօրութեան ներգործութիւնները, և կզարմանան միայն, այսպէս էին առաքեալները՝ քանի որ Փրկիչն իւր հոգին փշած չէր նոցաւ և Հոգւոյն շնորհքն զգեցած չէին. բայց երբ Աերնատան սքանչելիքումն Հոգւոյն սրբոյ հրեղէն բաժակն ընդունեցին, այնուհետեւ կարդաւ կյանդիչն Փրկչին խօսքերն, և օրինաց, Վարդարէից ու Սաղմոսաց պատգամներն: Մեք ևս՝ որ սուրբ աւաղանին մկրտութեամբը սրբուած, և Հոգւոյն դրօշմամբը վառուած հաւատացեալներէն ենք, և որ-

գիք հաւատացելոց, արթուն հոգւով նայինք Փրկչին սքանչելիքներուն։ և աներկրայ հաւատով հաւատանք նորա աստուածային վարդապետութեան, և զանանք մեր ամրողջ կեանքումն՝ որ պարարտ երկրում սերմանուած սերմի պտղաբերութիւնն ունենանք Աստուծոյ արքայութեան շաւիղներում։ և առանց տեսնելու հաւատացողներուն երանութեանն արժանի լինինք։

Կ. Վ. ՄԻԱՊԵԱՆ.

10 Յուլիսի 1890 թ.

Ի Շամախի